



ԱՌԵՎՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ  
ՀԻՒՍԽԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՎՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՒԱՔ

Միացեալ Նահանգներու մեր թեմի գեղեցիկ աւանդութիւններէն Ե՝ գործակցական սիրոյ այն մթնոլորտը, որ տարիներէ ի վեր կը տիրէ Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ քոյր Եկեղեցիներու՝ Յայ, Ղըպտի Եւ Կոստի Եկեղեցիներու Եւ անոնց բարեշան Առաջնորդներուն միջեւ, որոնք քրիստոնէական փոխադարձ սիրոյ Եւ յարգանքի մթնոլորտի մէջ սերտօրէն կը գործակցին Եւ միատեղ՝ կրօնական, դաստիարակչական, պատանեկան ու երիտասարդական մակարդակներու վրայ օգտաշատ ծրագիրներ կը մշակեն, նպատակ ունենալով քրիստոնէական ուղղափառ դաստիարակութիւն շամբել նոր սերունդներուն Եւ ամրապնդել Առաքելական հաւատքը:

Այս ծիրին մէջ, Երկուշաբթի, 14 Օգոստոսի կեսօրին, Իկու Ռաք շրջանի Ղըպտի Ուղղափառ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Միջին Արեւելքի Ուղղափառ Եկեղեցիներու Լու Անձելըսի շրջանի Առաջնորդներու հերթական ժողովը, մասնակցութեամբ Յայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի Եւ Գերշ. Տ. Յովսան Արք. Տերտերեանի, Ղըպտիներու Առաջնորդ Գերշ. Ս. Եռամին Զավելան Արքային կողմէ Գերշ. Ս. Յովսան Արք. Տերտերեանի, Ղըպտիներու Առաջնորդ Գերշ. Ս. Եռամին Զավելան Արքային պատճենութեամբ Յայլ հոգեւոր հայրեր: Ժողովին ներկայ եղաւ նաեւ Մեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի Միջ-Եկեղեցական յարաբերութեանց վարիչ՝ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեմեզեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուեր կարճատեւ այցելութեան մը համար:

Ժողովը քննարկեց յառաջիկայ միատեղ ծրագիրներու կարելիութիւնները: Իբրեւ յառաջիկայ անմիջական ծրագիր, որոշուեցաւ որ Երեք Ուղղափառ Եկեղեցիներուն Առաջնորդներուն հովանաւորութեամբ Շաբաթ, Յոկտեմբեր 28, 2006ին, առաւտեան ժամը 10:00-Էն յետմիջօրէի ժամը 3:30, Ղըպտիներու Յրեշտակապետ Միքայէլ Եկեղեցւոյ մէջ տեղի ունենայ միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական միօրեայ հաւաք: Աշակերտներու մասնակցութեամբ Եւ Երգեցողութեամբ պիտի կատարուի հաւաքական Ս. Պատարագ: Յաւաքական ճաշէ Ետք, տեղի պիտի ունենայ աշակերտական հաւաք, որուն պիտի մասնակցին կիրակնօրեայ վարժարաններու 8-15 տարեկան աշակերտներ: Պիտի գործադրուի դաստիարակչական յատուկ ծրագիր:

Ազգային Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակը Եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ Յանձնախումբը հովանաւորութեամբ Եւ գլխաւորութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազն Յօր, արդէն իսկ ծրագրումի նախնական աշխատանքներու ձեռնարկած Են գործնապես Եւ

լաւագոյնս մասնակցելու Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական միօրեայ դաստիարակչական սոյն հաւաքին:

Յիշենք նաեւ, որ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու գործունեութիւններէն եւ տարուած աշխատանքներէն էին անցեալ Մայիսին կայացած Առաջնորդներու համատեղ Ս. Պատարագը եւ Եկեղեցականաց միօրեայ համագումարը, ինչպէս նաեւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու Ս. Գրային գիտելիքներու աշակերտական մրցոյթը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Մայիսին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ յարկին տակ, իիւրընկալութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազն Յօր եւ գործոն մասնակցութեամբ Եկեղեցւոյս Յոգեւոր Յովիններուն եւ հոգաբարձութեան:

## ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Շաբաթ, 12 Օգոստոս, 2006ի յետմիջօրէին, թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան նախագահեց յատուկ ժողովի մը, որուն նպատակն էր քննարկել մեր թեմիս ու ծխական շրջաններու մակարդակներուն վրայ Եքիւմէնիք (Միջ-Եկեղեցական) գործակցութեան ծրագիրները:

Ժողովին հրահրուած էր այս նպատակով կազմուած յանձնախումբ մը: Ներկայ էր Սեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Եկեղեցիներու Յամաշխարհային Խորհուրդի (WCC) Միջ-Եկեղեցական Գրասենեակի Վարիչ՝ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքսեյէան:

Ժողովը քննարկեց Եկեղեցիներու եւ յարանուանութիւններու միջեւ փոխադարձ գործակցութեան մը Եգրերն ու հնարաւորութիւնները, շեշտելով անհրաժեշտութիւնը Եկեղեցիներու Յոգեւոր Յովիններու եւ հոգաբարձութեանց՝ սիրալիր եւ փոխադարձ սերտ յարաբերութիւններ մշակելու քոյր Եկեղեցիներու եւ յարանուանութիւններու հետ՝ միշտ առաջնորդուելով հայ Եկեղեցւոյ գերագոյն շահերէն եւ սկզբունքներէն:

Սոյն յանձնախումբը, գլխաւորութեամբ Օրդ. Վանա Կիցիննեանի, պիտի գործէ Առաջնորդ Սրբազն Յօր եւ Կրօնական ժողովի հովանաւորութեամբ եւ անմիջական ցուցմունքներով, ինչպէս նաեւ սերտ գործակցութեամբ եւ աշակցութեամբ Առաջնորդարանին Երիտասարդաց Կեդրոնական Յանձնախումբին: Միջ-Եկեղեցական Յարաբերական Յանձնախումբի աշխատանքները պիտի ընդգրկեն հետեւեալները.

ա.- Սերտ եւ փոխադարձ յարաբերութիւն եւ գործակցութիւն ծաւալել քոյր Եկեղեցիներու եւ յարանուանութիւններու հետ:

բ.- Ծանօթանալ այլ Եկեղեցիներու եւ յարանուանութիւններու:

գ.- Յատկապէս ուսանողներ եւ համալսարանականներ ներգրաւել միջ-Եկեղեցական աշխատանքներու մէջ:

դ.- Ուսումնասիրել եւ մօտէն ծանօթանալ Եկեղեցիներու դիմակալած ընկերային, կրօնական դժուարութիւններուն, տագնապներուն եւ փոխադարձ փորձառութիւններէ օգտուիլ:

ե.- Առաքելական Ուղղափառ դաւանանքը անաղարտ պահել եւ Յայ Եկեղեցւոյ աւանդութիւններն ու ազգային դիմագիծը օտարներուն ծանօթացնել:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազնա Յայրը գոհուսակութիւն յայտնեց Միջեկեղեցական յարաբերութեանց յանձնախումբի խանդավառ աշխատանք ծաւալելու պատրաստակամութեան համար, միաժամանակ թելադրեց ըլլալ հետեւողական՝ ներգրաւելու Յայ Եկեղեցւոյ արեժերներով խանդավառ ու գիտակից երիտասարդ նոր ուժեր, մանաւանդ ուսանողներ եւ համալսարանականներ ստանձնեն գործոն դերակատարութիւն մեր ազգային Եկեղեցական կեանքեն ներս: Միջ-Եկեղեցական յարաբերութիւններ մշակող այս յանձնախումբին աշխատանքներն ու գործունեութիւնները մաս պիտի կազմեն Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծաւալած էքիւմենիք աշխատանքներուն, ծրագիրներուն եւ առաքելութեան:

## COUNCIL OF ORIENTAL ORTHODOX CHURCHES SUNDAY SCHOOL SPIRITUAL GATHERING

On Monday, August 14, 2006, the Council of Oriental Orthodox Churches of the Western United States held their regular meeting at St. Mary's Coptic Orthodox Church in Eagle Rock. Participating in the meeting were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church, and members of the clergy order. Also present was H.G. Bishop Nareg Alemezian, Ecumenical Officer of the Holy See of Cilicia, who was in Los Angeles for a brief visit to the Western Prelacy.

Among the items on the agenda was the possibility of future joint ventures. In this realm, it was decided that a one-day spiritual gathering for Sunday School students would take place under the auspices of the Oriental Orthodox Council Bishops. The gathering is to be held on Saturday, October 28, 2006, from 10:00 a.m. to 3:30 p.m. at Archangel Michael Coptic Orthodox Church. Students ages 8-15 will participate in the gathering, where there will be a joint Morning Services, and an educational program, among other activities.

In the past, the Council of Oriental Orthodox Churches has organized joint Holy Mass, seminars, and the Sunday School Bible competition that took place on Saturday, May 13, hosted by the Prelate at St. Mary's Church in Glendale.

## ECUMENICAL ACTIVITIES

On Saturday, August 12, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over a special meeting to discuss Ecumenical activities with members of Prelacy youth who will be part of a committee to be formed for this specific purpose. H.G. Bishop Nareg Alemezian, Ecumenical Officer of the Holy See of Cilicia also participated in the meeting.

The meeting discussed inter-church collaboration, stressing the importance of establishing relations between clergy and Board of Trustees and sister churches, guided by the virtues and principles of the Armenian Church.

The committee will serve under the auspices of the Prelate and the Religious Council, and with the support and collaboration of the Prelacy Youth Central Council. The work of the committee will encompass the following:

- To enhance cordial inter-church and intra-church relations and collaboration.
- To become familiarized with different churches and denominations.
- To involve students in ecumenical affairs.
- To examine and become closely familiarized with the problems that churches face and to build on such experiences.
- To keep the Oriental Orthodox doctrine sacred and to familiarize others with the traditions of the Armenian Church and our national identity.

On this occasion, the Prelate commended the participants, who will become members of the committee and who will be a part of the Ecumenical activities under the auspices of the Holy See of Cilicia.